Երևանի Լեոնիդ Ազգալդյանի անվան հ.200 հիմնական դպրոցի

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

2021-2026թթ.

Դպրոցի տնօրենի հավակնորդ՝

Հովհաննիսյան Մարինե

Երևան 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բաժին	Քայլեր		էջ
		Ներածություն	3
1	1	Հաստատության առաքելությունը	3
2		Հաստատության մասին ընդհանուր տեղեկություններ	4
2.1	2	Առկա իրավիճակի վերլուծությունը	4
2.2	3	Դպրոցի ուժեղ և թույլ կողմերի բացահայտում	5
2.3	4	Հիմնախնդիրների ձևակերպումը, դրանց լուծման համար անհրաժեշտ ռեսուրսների նկարագրությունը	6
3		Հաստատության գործունեության վերլուծության և նպատակադրման ոլորտները	6
3.1	5	Գործունեության ոլորտների, նրանցում առկա հիմնախնդիրների վերլուծությունը և նպատակների սահմանումը	7
4	6	Հաստատության գործունեության՝ առանձնացված յուրաքանչյուր ոլորտում առկա խնդիրները. Յուրաքանչյուր նպատակի խնդիրների սահմանումը	22
5		Հաստատության գործունեության յուրաքանչյուր ոլորտի նպատակները և խնդիրները	23
6		Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները, կատարողները, ժամանակացույցը և հնարավոր ֆինանսական ծախսերը	26
6.1	7	Յուրաքանչյուր խնդրի իրականացման գործողությունների, դրանց պատասխանատուների, ժամկետների, ակնկալվող արդյունքների սահմանումը	31
6.2	8	Զարգացման ծրագրի ֆինանսավորման մեխանիզմների սահմանումը	34
7		Ծրագրի իրականացման ռիսկերը և դրանց ազդեցությանն ուղղված գործողությունները	34
7.1	9	Զարգացման ծրագրի իրականացման ռիսկերի ազդեցության նվազմանն ուղղված գործողությունների սահմանումը	37
8		Ծրագրի գնահատման չափանիշները, վերահսկողությունը	37
8.1	10	Զարգացման ծրագրի մշտադիտարկման, վերահսկողության մեխանիզմների, ծրագրի իրականացման արդյունավետության գնահատման ցուցանիշների ձևակերպումը	38
8.2	11	Հաստատության մասին համառոտ տեղեկանք	39

Ներածություն

Զարգացման ծրագիրը հանրակրթական ուսումնական հաստատության կարևորագույն ռազմավարական փաստաթուղթն է, որի հիման վրա պլանավորվում է աշխատանքը դպրոցում: Ծրագիրը գրվել է՝ հիմք ընդունելով ՀՀ ԿԳՄՄՆ-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման պահանջները ու ձևաչափը հաստատելու մասին» կարգի դրույթներ և կարգում ներկայացված փոփոխությունները:

1.Հաստատության առաքելությունը

Դպրոցի առաքելությունը սահմանելիս առաջնորդվել եմ՝ պատասխանելով հետևյալ հարցերին.

- ✓ Ի՞նչ կրթական կարիքներ է այն բավարարելու
- ✓ Ի՞նչ նյութական ռեսուրսներ են առկա դրա համար
- ✓ Ի՞նչ ռեսուրսներ են անհրաժեշտ, որպեսզի իրականացվի ԴԶԾ-ն և որքանո՞վ է դա իրատեսական:

Հանդիսանալով դպրոցի գործող տնօրեն՝ քաջատեղյակ եմ դպրոցի ներքին և արտաքին մարտահրավերներին, շուրջ հինգ տարի ուսումնասիրել եմ համայնքի կարիքները, ինչն էլ ինձ օգնել է զարգացման ծրագրի առաքելությունը սահմանելիս: Յուրաքանչյուր երեխայի համար պետք է ապահովված լինեն իր կարողությունները ուսումնառության փուլերում հմտությունների վերածելու, գիտելիքի բացարձակ պաշար կուտակելու, կյանքում իր կարողունակությունները վստահաբար կիրառելու պայմանները: Գործունեության հիմքում դնելով համընդհանուր աշակերտակենտրոն ուսուցմամբ առաջնորդվելու սկզբունքը՝ արձանագրել կրթական գործի հաջողություններ: Աջակցել, որ հաջողության բանաձևով յուրաքանչյուր աշակերտ կարողանա իր երազանքը գիտելիքի ճանապարհով, սեփական ես-ի բացահայտմամբ, ինքնադրսևորմամբ պատրաստ լինի տիրապետել ցանկացած իրավիճակի, մեծ գործեր կատարելու՝ ի նպաստ հայրենիքի և պետության:

Այսպիսով՝ դպրոցի առաքելության համար, ներառած առաջիկա հնգամյա գործունեության բաղադրիչ բոլոր փուլերը, վստահաբար սահմանում եմ այս բնաբանը.

Բոլոր երեխաներն իրավունք ունեն կրթություն ստանալու, և դպրոցն է նրանց հենման կետը:

2. Հաստատության մասին ընդհանուր տեղեկություններ

ԵրևանիԼ. Ազգալդյանի անվան հ 200 հիմնական դպրոցը գտնվում է Դավթաշեն I թաղամասում, գործում է 1991թվականից: Դպրոցը հասակակիցն է Հայաստանի 3-րդ հանրապետության: Դպրոցական շենքի կառուցման աշխատանքները, պայմանավորված 1988թ-ի երկրաշարժով, դադարեցվել էին հիմքը ամրացնելու նպատակով, որի պատճառով 1991-1994թթ. դպրոցը գործել է հ. 189 միջն. դպրոցի շենքում: Շրջափակումների, պատերազմների ու բոլոր տեսակի դժվարությունների պատճառով 1994թ. կառուցվեց երեք մասնաշենք ունեցող դպրոցական շենքի միայն մեկ (300 աշակերտների համար նախատեսված) մասնաշենքը: Դպրոցը մնաց կիսակառույց: 2006-2007 ուստարում ավելացել էր դպրոցի աշակերտների թիվը: 2007թ. սկսվեց դպրոցական անավարտ շենքի կառուցումը պետբյուջեի հատկացումներով և ավարտվեց 2009թ-ին: 2010թ. սեպտեմբերից դպրոցը դարձել է հիմնական: Դպրոցում իրականացվում է ներառական կրթություն, գործում է զգայական ինտեգրացիայի սենյակ, մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների չորս սենյակներ: Դպրոցում ուսումնասիրվում է երեք օտար լեզու՝ ռուսերեն, անգլերեն, պարսկերեն, գործում է «Արմաթ» ինժեներական լաբորատորիա: 2020 թ-ին դպրցում բացվել է քիմիա-կեսաբանական լաբորատորիա, ընթացքի մեջ են համակարգչային կաբինետի բացման աշխատանքները: Դպրոցի աշակերտների սահմանային տեղերը ըստ տարրական ծրագրի, 600 սովորող, ըստ հիմնական ծրագրի՝ 350 սովորող:

2.1 Առկա իրավիճակի վերլուծությունը

Դպրոցն իր գործունեության ընթացքում ձևավորել է կայուն ավանդույթներ, որոնք ապահովում են ուսումնական միջավայրի թափանցիկություն, արդյունավետություն,

բազմաթիվ միջոցառումների շնորհիվ էլ՝ արժեհամակարգի ձևավորում: Այս ամենում գերակա է դպրոց - աշակերտ - ծնող համագործակցությունը, որը մշտապես գտնվում է կատարելագործման, բարելավման և փոփոխությունների գործընթացում՝ պարունակելով իր մեջ բացթողումներ, որոնք ճիշտ պլանավորման և հետևողական աշխատանքի շնորհիվ կտան ցանկալի արդյունք:

Առկա իրավիճակի վերլուծությունը, բացահայտելով դպրոցի ուժեղ և թույլ կողմերը ըստ ոլորտների, թույլ կտա վեր հանել առկա հիմնախնդիրները, ձևակերպել նպատակներ, խնդիրներ, տալ դրանց լուծման մեխանիզմները և ժամանակացույցը:

2.2 Դպրոցի ուժեղ և թույլ կողմերի բացահայտում

Բացահայտումը կիրականացնեմ ՈՒԹՀՎ վերլուծության հետևյալ սխեմայով:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Այն առանձնահատկությունները, որոնք նպաստում են դպրոցի գործունեության արդյունավետության բարձրացմանը:	Այն առանձնահատկությունները, կողմերը, որոնք զարգացման կարիք ունեն, կամ որոնք կարող են ստեղծել խնդրահարույց իրավիակներ:
Հնարավորություններ	**Վտանգներ**
Այն հնարավորությունները, ռեսուրսները, որ կան դպրոցում: Դրանք կարող են լինել նյութատեխնիկական, մասնագիտական և այլն:	Այն ռիսկերը, որոնք առկա են և կարող են խոչընդոտել խնդրի լուծման գործընթացում:

Դպրոցի ուժեղ և թույլ կողմերի բացահայտումներն իրականացրել եմ մի քանի մակարդակներում, համադրել ստացված արդյունքները: Կիրառված մեթոդաբանությունը՝ ֆոկուս խմբեր, հարցազրույց, փաստաթղթերի վերլուծություն, դիտարկում, փոքր խմբերով քննարկում՝ ներառելով սովորողներին, ուսուցիչներին, ծնողներին, վարչական աշխատակազմին:

2.3 Հիմնախնդիրների ձևակերպումը, դրանց լուծման համար անհրաժեշտ ռեսուրսների նկարագրությունը

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ զարգացման ծրագիրը ներկայացնում եմ որոշակի կառուցվածքում, հիմնախնդիրների ձևակերպումը կներկայացնեմ ՈՒԹՀՎ-ի բոլոր ոլորտների աղյուսակներից հետո: Հիմնախնդիրների բացահայատման և դրանք հաղթահարելու համար կօգտագործվեն դպրոցի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին հնարավորությունները և ռեսուրսները: Մասնավորապես ցանկանում եմ առանձնացնել հետևյալ ռեսուրսները.

- ✓ կադրային
- ✓ ծնողական համայնքի
- ✓ աշակերտական համայնքի
- ✓ ինքնակառավարման մարմինների
- ✓ ֆինանսական:

3. Հաստատության գործունեության վերլուծության և նպատակադրման ոլորտները

- ➢ Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան
- ➢ Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը
- ➢ Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր, դրանց վարումը
- ➢ Կառավարման և խորհրդակցական մարմինները
- ➢ Աշակերտական համակազմը
- ➢ Մանկավարժական համակազմը
- ➢ Համագործակցությունը հանայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ
- ➢ Ուսումնական միջավայրը
- ➢ Կրթության որակը՝ ըստ սովորողների ուսումնառության արդյունքների
- ➢ Տեխնոլոգիաները և նորարարությունները:

3.1 Գործունեության ոլորտների նրանցում առկա հիմնախնդիրների վերլուծությունը և նպատակների սահմանումը

ա) Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Այն առանձնահատկությունները, որոնք նպաստում են դպրոցի գործունեության արդյունավետության բարձրացմանը։ Դպրոցը գործում է երկու մասնաշենքով։ Ներկառուցված դասասենյակների շնորհիվ այն միահերթ է։ Նոր մասնաշենքը և հին մասնաշենքի առաջին հարկի դասասենյակները վերանորոգված են։ Դպրոցն ունի երկու սպորտդահլիճ, հանդիսությունների դահլիճ,ուսուցչանոց- գրադարան, հոգեբանի, սոցմանկավարժի, լոգոպեդի կաբինետներ, զգայական ինտեգրացիայի սենյակ, քիմիա-կենսաբանության լաբորատորիա, համակարգչային կաբինետ(ընթացքի մեջ), բուֆետ, դպրոցի մուտքի թեքահարթակ, օդափոխության համակարգ նկուղում։	*Այն առանձնահատկությունները, կողմերը, որոնք զարգացման կարիք ունեն, կամ որոնք կարող են ստեղծել խնդրահարույց իրավիակներ։* 1. Անձրևաջրերի հոսքի և վթարային իրավիճակների արդյունքում խոնավություն է կուտակվում նկուղում, ինչպես նաև քայքայվում են արտաքին պատերը, խարխլվում է հիմքը։ 2. Դպրոցի հին մասնաշենքի 2-րդ և 3-րդ հարկերի դասասենյակնրի , միջանցքների հիմնանորոգում, նոր հոսանքալարերի անցկացում։ 3. Դպրոցական մաշված գույքի առկայություն դպրոցում։ 4. Դպրոցում գործող երկու սպորտային դահլիճները բավարար չեն ֆիզկուլտուրայի դասաժամերը լիարժեք անցկացնելու համար։ 5. Տաք ջրի բացակայություն։
Հնարավորություններ	**Վտանգներ**
Այն հնարավորությունները, ռեսուրսները, որ կան դպրոցում։ Դրանք կարող են լինել նյութատեխնիկական, մասնագիտական և այլն։ 1. Դպրոցի շինության երկարաժամկետ պահպանումն ապահովելու համար անհրաժեշտ է կատարել դպրոցի շենքի	*Այն ռիսկերը, որոնք առկա են և կարող են խոչընդոտել խնդրի լուծման գործընթացում։* 1. Ֆորսմաժորային իրավիճակներ (պատերազմ, համավարակ, բնական աղետներ)։

հիմքի ամրացում։ 2-3. Հնարավոր է դպրոցի բյուջեի հաշվին իրականացնել վերանորոգման աշխատանքներ։ 4.Դպրոցամերձ տարածքի մի հատվածում բացօթյա սպորտհրապարակի ստեղծումը կլուծի ֆիզկուլտուրայի դասաժամերի լիարժեք իրականացման խնդիրը։ 5.Արևային մարտկոցների տեղադրում։	2. Անհրաժեշտ թույտվությունների երկարաձգում։

Հիմնախնդիրները

1. Դպրոցի հիմքն ունի ամրացման, ջրահեռացման համակարգի վերանորոգման կարիք.

2. Հին մասնաշենքի 2-րդ և 3-րդ հարկերի հիմնանորոգման անհրաժեշտություն կա.

3. Դպրոցական մաշված գույքի փոխարինում նորով.

4. Ֆիզկուլտուրայի բացօթյա սպորտհրապարակի կառուցում.

5. Էներգախնայողական համակարգի ներդրում (արևային մարտկոցների տեղադրում)։

բ) Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը

Դպրոցի եկամուտների և ծախսերի հարաբերակցությունը՝ ըստ նախորդող մի քանի տարիների։

Ուստարի	Եկամուտներ	Ծախսեր
2017	186011600	186011600
2018	193597700	193597700
2019	197959500	197959500
2020	203861900	203861900
2021	199350400	199350400

Դիագրամ 1



Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքները (կապիտալ ծախսերը՝ ընթացիկ վերանորոգում, գույքի ձեռքբերում, հանրակրթական ծրագրի մաս կազմող միջոցառումների կազմակերպում)

Ուստարի	*Ընթացիկ վերանորոգում*	*Գույքի ձեռքբերում*	*Հանրակրթական ծրագրի մաս կազմող միջոցառումների կազմակերպում*	Կապիտալ վերանորոգում
2017	971600	8728300	0	10767300
2018	8574600	10558300	1466000	0
2019	732900	4363800	0	0
2020	990000	4320200	0	0
2021	990000	4500000	0	0

Դիագրամ 2



Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Այն առանձնահատկությունները, որոնք նպաստում են դպրոցի գործունեության արդյունավետության բարձրացմանը: Պետական բյուջեից ստացվող ֆինանսական միջոցների կայուն և ժամանակին փոխանցումները: Աշակերտների թվով ֆինանսավորման բանաձևով ֆինասական աճի ապահովում:	*Այն առանձնահատկությունները, կողմերը, որոնք զարգացման կարիք ունեն, կամ որոնք կարող են ստեղծել խնդրահարույց իրավիճակներ:* Պետական բյուջեից դպրոցի զարգացմանն ուղղված ծրագրերի կազմման ֆինանսավորման անբավարար ծավալը: Անհրաժեշտ ուսումնանյութական բազայի անբավարար ապահովվածությունը:
Հնարավորություններ	**Վտանգներ**
Այն հնարավորությունները, ռեսուրսները, որ կան դպրոցում: Դրանք կարող են լինել նյութատեխնիկական, մասնագիտական և այլն: Տարածքների նպատակային	*Այն ռիսկերը, որոնք առկա են և կարող են խոչընդոտել խնդրի լուծման գործընթացում:* Դպրոցի ֆինանսավորման բանաձևի փոփոխությամբ պայմանավորված

վարձակալության տրամադրումից ավելացող ֆինանսական միջոցների ավելացում: Ձեռնարակտիրական գործունեության շնորհիվ դեպի դպրոց ֆինանսների հոսք:	դրամական հոսքերի նվազում:

Հիմնախնդիր

Դպրոցի ֆինանսական միջոցների ավելացմանը միտված բոլոր արդյունավետ գործողությունների իրականացում:

գ) Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր, դրանց վարումը

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Այն առանձնահատկությունները, որոնք նպաստում են դպրոցի գործունեության արդյունավետության բարձրացմանը:	*Այն առանձնահատկությունները, կողմերը, որոնք զարգացման կարիք ունեն, կամ որոնք կարող են ստեղծել խնդրահարույց իրավիճակներ:*
Դպրոցի գործունեությունը կանոնակարգող փաստաթղթերն են՝ 1. <u>Էլեկտրոնային մատյան</u> 2. <u>Աշխատողի անձնական էլեկտրոնային գործ</u> 3. <u>Սովորողի անձնական էլեկտրոնային գործ</u> 4. Հիմնական կրթության վկայականների բաշխման մատյան 5. Ավարտական, փոխադրական, էքտեռն քննությունների և գիտելիքների ստուգման	Դպրոցի գործունեությունը կանոնակարգող փաստաթղթերից ոչ բոլորի էլեկտրոնային տարբերակով վարումն է կիրառվում, ինչն էլ առաջացնում է թղթային և էլեկտրոնային փաստաթղթերի կրկնակի վարման պահանջ:

արձանագրություններ 6. Էլեկտրոնային հաստիքացուցակ 7. Տարիֆիկացիոն մատյան 8. Ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի նիստի արձանագրություն 9. Ուսուցիչների բաց թողած և փոխարինված դասաժամերի հաշվառման մատյան 10. Ուսումնական առարկաների թեմատիկ պլաններ՝ էլեկտրոնային տարբերակով 11. Դասալսումների արդյունքների արձանագրություն 12. Ուսումնական հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլան, տնօրենի տեղակալների առարկայական մեթոդական միավորումների ղեկավարների,	

դասղեկների աշխատանքային պլաններ էլեկտրոնային տարբերակով 13. Սովորողների շարժի մատյան Վերոնշյալ փաստաթղթերի էլեկտրոնային և թղթային տարբերակների վարումը կատարվում է պատշաճ մակարդակով։ Իրավական ակտերն են՝ ✓ Դպրոցի կանոնադրություն ✓ Դպրոցի ներքին կարգապահական կանոններ։	
Հնարավորություններ *Այն հնարավորությունները, ռեսուրսները, որ կան դպրոցում։ Դրանք կարող են լինել նյութատեխնիկական, մասնագիտական և այլն։* Հնգամյա ժամկետում դպրոցի գործունեությունը կարգավորող 13 փաստաթղթերի վարումը կիրականացվի էլեկտրոնային եղանակով։	**Վտանգներ** *Այն ռիսկերը, որոնք առկա են և կարող են խոչընդոտել խնդրի լուծման գործընթացում։* Էլեկտրոնային փաստաթղթերի ծրագրային անվտանգության ապահովման խնդիրը և հաքերային հարձակումներից պաշտպանվելու հուսալիության ցածր մակարդակը։

Հիմնախնդիր

Դպրոցի գործունեությունը կարգավորող էլեկտրոնային փաստաթղթերի անթերի վարում։

դ) Կառավարման և խորհրդակցական մարմինները

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Այն առանձնահատկությունները, որոնք նպաստում են դպրոցի գործունեության արդյունավետության բարձրացմանը։ Դպրոցում գործող կառավարման և խորհրդակցական մարմիններն են՝ ➢ դպրոցի խորհուրդ ➢ մանկավարժական խորհուրդ ➢ աշակերտական խորհուրդ ➢ ծնողական խորհուրդ Դպրոցում իրականացվող ցանկացած ուսումնադաստիարակչական աշխատանքում առկա է վերոնշյալ խորհուրդների գործնական սերտ համագործակցությունը։	*Այն առանձնահատկությունները, կողմերը, որոնք զարգացման կարիք ունեն, կամ որոնք կարող են ստեղծել խնդրահարույց իրավիճակներ։* Կառավարման և խորհրդակցական մարմինների անդամների կրթական ոլորտի պետական և իրավական փաստաթղթերի վարման հմտությունների պակաս։
Հնարավորություններ	**Վտանգներ**
Այն հնարավորությունները, ռեսուրսները, որ կան դպրոցում։ Դրանք կարող են լինել նյութատեխնիկական, մասնագիտական և այլն։ Ձևավորել դպրոցի Հոգաբարձուների խորհուրդ՝ համաձայն դպրոցի կանոնադրության։ Բարձրացնել դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինների համագործակցության արդյունավետությունը՝ առավելագույնս օգտագործելով վերոնշյալ մարմինների ներուժը։	*Այն ռիսկերը, որոնք առկա են և կարող են խոչընդոտել խնդրի լուծման գործընթացում։* Քննարկվող հարցերը միասնական օրակարգում ներկայացնելու հնարավորությունը և կազմակերպչական հարցերի կարգավորումը։

Հիմնախնդիր

Հոգաբարձուների խորհրդի ձևավորում։

Դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինների համագործակցության արդյունավետության բարձրացում։

ե) Աշակերտական համակազմը

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Այն առանձնահատկությունները, որոնք նպաստում են դպրոցի գործունեության արդյունավետության բարձրացմանը։ Առաջնորդվելով ԱԽ-ի օրինակելի կանոնադրության դրույթներով՝ իրականացվում է Աշակերտական խորհրդի բոլոր օղակների բնականոն աշխատանքը։	*Այն առանձնահատկությունները, կողմերը, որոնք զարգացման կարիք ունեն, կամ որոնք կարող են ստեղծել խնդրահարույց իրավիճակներ։* ԱԽ- ի գործունեության արդյունավետության բարձրացմանը խոչընդոտ է աշխատանքները կազմակերպելու, ընթացիկ հարցերը քննարկելու համար առանձին աշխատասենյակ չունենալը։
Հնարավորություններ	**Վտանգներ**
Այն հնարավորությունները, ռեսուրսները, որ կան դպրոցում։ Դրանք կարող են լինել նյութատեխնիկական, մասնագիտական և այլն։ Աշակերտների ճկունությունը, նախաձեռնողականությունը, պատրաստակամությունը ի նպաստ դնել դպրոցի առաջընթացին։	*Այն ռիսկերը, որոնք առկա են և կարող են խոչընդոտել խնդրի լուծման գործընթացում։* Ինքնուրույն գործելու պասիվություն։

Հիմնախնդիր

Աշակերտական համակազմը արդի կրթական պահանջներին և արժեհամակարգին ինտեգրելը։



զ) Մանկավարժական համակազմը

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Այն առանձնահատկությունները, որոնք նպաստում են դպրոցի գործունեության արդյունավետության բարձրացմանը:	*Այն առանձնահատկությունները, կողմերը, որոնք զարգացման կարիք ունեն, կամ որոնք կարող են ստեղծել խնդրահարույց իրավիճակներ:*
Ուսումնական հաստատությունն ունի որակյալ ուսուցչական անձնակազմ, և ուսուցիչները հիմնականում տիրապետում են դասավանդման ժամանակակից մեթոդներին: Բոլորը դասավանդում են ըստ մասնագիտությունների: Դպրոցն ունի տարակարգով չորս ուսուցիչներ, ուսուցիչներից 13-ը մասնակցում են նախաատեստացիոն պարտադիր վերապատրաստման դասընթացների, մեկ ուսուցիչ մասնակցել է կամավոր	Գիտական կոչում ունեցող ուսուցիչներ չկան: Դպրոցի ուսուցչական համակազմում ոչ բոլոր ուսուցիչներն են տիրապետում զարգացման ժամանակակից մեթոդներին:

ատեստավորման թեստավորմանը: Դպրոցում կան երկու վերապատրաստողներ՝ Հովհաննիսյան Մարինե («Ներառական կրթություն», «Տնօրենների վերապատրաստում», «Ուսուցիչների հերթական ատեստավորման դասընթաց»), Գայանե Կարապետյան («Ուսուցիչների հերթական ատեստավորման դասընթաց», «Ներառական կրթություն»):	
Հնարավորություններ *Այն հնարավորությունները, ռեսուրսները, որ կան դպրոցում: Դրանք կարող են լինել նյութատեխնիկական, մասնագիտական և այլն:* Որակյալ մանկավարժական կադրերի ընտրություն, մանկավարժական համակազմի մասնագիտական զարգացում (վերապատրաստում, ինքնակրթություն):	**Վտանգներ** *Այն ռիսկերը, որոնք առկա են և կարող են խոչընդոտել խնդրի լուծման գործընթացում:* Լավագույն ուսուցիչների արտահոսք այլ աշխատանքային գործունեություն ծավալելու նպատակով:

Հիմնախնդիր

Ուսուցչի թափուր տեղի մրցույթի թափանցիկ և բացառապես օբյեկտիվ ընտրության անցկացումը:

է) Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ

Ուժեղ կողմեր	**Թույլ կողմեր**
Այն առանձնահատկությունները, որոնք նպաստում են դպրոցի գործունեության արդյունավետության բարձրացմանը:	*Այն առանձնահատկությունները, կողմերը, որոնք զարգացման կարիք ունեն, կամ որոնք կարող են ստեղծել խնդրահարույց իրավիճակներ:*

Համագործակցության մարմիններն են. 1. քաղաքապետարան 2. թաղապետարան 3. ծնողական համայնք 4. հասարակական կազմակեպություններ։ 1.1 Կրթության կառավարման մարմինների՝ դպրոցին ներկայացվող հանձնարարականների պատշաճ կատարում։ 2.1. Համատեղ հարցերի քննարկման, շինարարական աշխատանքների, թաղամասի բարեկարգման գործում առկա սերտ համագործակցություն։ 3.1. Համատեղ որոշումներով իրականացվող բազմաբնույթ միջոցառումների և ծրագրերի իրականցում։ 4.1.«Փյունիկ» Հայաստանի հաշմանդամների միություն, «Հույսի կամուրջ»։	Ծնողների և ՀԿ-ների հետ չկանոնակարգված համագործակցությունը։
Հնարավորություններ *Այն հնարավորությունները, ռեսուրսները, որ կան դպրոցում։ Դրանք կարող են լինել նյութատեխնիկական, մասնագիտական և այլն։* Համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ	**Վտանգներ** *Այն ռիսկերը, որոնք առկա են և կարող են խոչընդոտել խնդրի լուծման գործընթացում։* Շահագրգիռ կողմերի ակտիվության, նախաձեռնողականության պասիվությունը։

աշխատանքի մոտիվացիայի խորացում:	

Հիմնախնդիր

Համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ համագործակցության խորացում:

ը) Ուսումնական միջավայրը

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Այն առանձնահատկությունները, որոնք նպաստում են դպրոցի գործունեության արդյունավետության բարձրացմանը:	*Այն առանձնահատկությունները, կողմերը, որոնք զարգացման կարիք ունեն, կամ որոնք կարող են ստեղծել խնդրահարույց իրավիճակներ:*
Ուսումնական հաստատությունում ստեղծված է աշխատանքային կրթական միջավայր: Գործում է գրադարան, որը հագեցած է ուսումնաօժանդակ և գեղավերստական գրականությամբ: Գործում է քիմիա-կենսաբանության ուսումնական ժամանակակից լաբորատորիա: Գործում է նաև «Արմաթ» ինժեներակա լաբորատորիան: Դպրոցը հագեցված է ինտերակտիվ գրատախտակներով: Դպրոցում ուսումնասիրվում է երեք օտար լեզու՝ ռուսերեն, անգլերեն, պարսկերեն: Որակյալ մանկավարժահոգեբանական ծառայությունների տրամադրման նպատակով գործում է զգայական	Ուսումնական միջավայրի կենտրոնում ուսուցիչն է, այլ ոչ թե սովորողը: Ուսուցումը աշխատանքային գործընթաց դարձնելու համար հետևողական աշխատանք չի տարվում:

ինտեգրացիայի սենյակ:	
Հնարավորություններ *Այն հնարավորությունները, ռեսուրսները, որ կան դպրոցում: Դրանք կարող են լինել նյութատեխնիկական, մասնագիտական և այլն:* Դպրոցի ուսումնանյութական բազայի հարստացում: Ուսումնական միջավայրը դարձնել բազմանպատակ, շարժուն և բաց:	**Վտանգներ** *Այն ռիսկերը, որոնք առկա են և կարող են խոչընդոտել խնդրի լուծման գործընթացում* Միայն ավանդական ուսումնական միջավար ապահովելով՝ դպրոցը հետ կմնա կրթական միջավայրի այն փոփոխություններից, որոնք որդեգրված են ԿԳՄՍ նախարարության բարեփոխումների ծրագրում:

Հիմնախնդիր

Դպրոցի ուսումնական բազայի համալրում:
Ուսումնական միջավայրի բարեփոխում:

թ) Կրթության որակը՝ ըստ սովորողների ուսումնառության արդյունքների

Ուժեղ կողմեր	**Թույլ կողմեր**
Այն առանձնահատկությունները, որոնք նպաստում են դպրոցի գործունեության արդյունավետության բարձրացմանը: Հայոց և օտար լեզուներից նկատվում է քննական և տարեկան միջին գնահատականների աճ: Աճել է մարզային օլիմպիադաներում հաղթողների թիվը:	*Այն առանձնահատկությունները, կողմերը, որոնք զարգացման կարիք ունեն, կամ որոնք կարող են ստեղծել խնդրահարույց իրավիակներ:* Չկան հանրապետական և միջազգային առարկայական օլիմպիադաներում մասնակից աշակերտներ:
Հնարավորություններ *Այն հնարավորությունները, ռեսուրսները, որ կան դպրոցում: Դրանք կարող են լինել նյութատեխնիկական, մասնագիտական և այլն:*	**Վտանգներ** *Այն ռիսկերը, որոնք առկա են և կարող են խոչընդոտել խնդրի լուծման գործընթացում:*

1.Ուժեղացնել աշխատանքները օլիմպիական խմբերում: 2.Մեծացնել աշակերտների հետ կազմակերպվող հետազոտական աշխատանքների ծավալը:	Աշակերտների թվի ցածր մասնակցությունը առարկայական օլիմպիադաներին:

Հիմնախնդիր

Օլիմպիական խմբերի ձևավորում:

Օժտված երեխաների բացահայտումը:

ժ) Տեխնոլոգիաները և նորարարությունները

Ուժեղ կողմեր	**Թույլ կողմեր**
Այն առանձնահատկությունները, որոնք նպաստում են դպրոցի գործունեության արդյունավետության բարձրացմանը: Դպրոցում առկա է 8 էլեկտրոնային գրատախտակ, ինտերնետ կապ և թվով 24 համակարգիչներ:	*Այն առանձնահատկությունները, կողմերը, որոնք զարգացման կարիք ունեն, կամ որոնք կարող են ստեղծել խնդրահարույց իրավիակներ:* Լիցենզավորված ծրագրային ապահովման պակաս: Գերարագ ինտերնետ կապի բացակայություն:
Հնարավորություններ	**Վտանգներ**
Այն հնարավորությունները, ռեսուրսները, որ կան դպրոցում: Դրանք կարող են լինել նյութատեխնիկական, մասնագիտական և այլն: Համակարգչային դասասենյակի և համապատասխան տեխնիկայի առկայություն,համակարգչային ծրագրերով աշխատելու հմտություններին տիրապետող մանկավարժական համակազմ:	*Այն ռիսկերը, որոնք առկա են և կարող են խոչընդոտել խնդրի լուծման գործընթացում:* Ինտերնետ կապի դանդաղ աշխատանք: Առկա սարքավորումների և ծրագրերի խափանում: Դպրոցում առկա սարքավորումների հզորությունների համապատասխանեցումը ՏՀՏ ոլորտի արագընթաց փոփոխություններին:

Հիմնախնդիր

Համակարգչային ծրագրերով աշխատելու հմտություններին տիրապետող մանկավարժական համակազմի ձևավորում:

4. Հաստատության գործունեության՝ առանձնացված յուրաքանչյուր ոլորտում առկա խնդիրները. Յուրաքանչյուր նպատակի խնդիրների սահմանումը

Հաստատության գործունեության ոլորտ	Խնդիրներ
Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան	1. ա/ Դպրոցի հիմքի ամրացում, բ/ ջրահեռացման համակարգի վերանորոգում 2.Հին մասնաշենքի 2-րդ և 3-րդ հարկերի հիմնանորոգում. 3. Դպրոցական նոր գույքի ձեռքբերում 4. Ֆիզկուլտուրայի բացօթյա սպորտհրապարակի կառուցում 5. Էներգախնայողական համակարգի ներդրում
Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը	Ֆինանսական միջոցների ներհոսքի ավելացման արդյունավետ գործողությունների իրականացում
Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր, դրանց վարումը	Դպրոցի գործունեությունը կարգավորող էլեկտրոնային փաստաթղթերի վարում
Կառավարման և խորհրդակցական մարմինները	ա/ Հոգաբարձուների խորհրդի ձևավորում: բ/ Դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինների

	համագործակցության արդյունավետության բարձրացում
Աշակերտական համակազմը	Աշակերտական համակազմի արդի կրթական պահանջներին և արժեհամակարգին ինտեգրում
Մանկավարժական համակազմը	Ուսուցչի թափուր տեղի մրցույթի թափանցիկ և բացառապես օբյեկտիվ ընտրության անցկացում
Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ	Համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ համագործակցության խորացում
Ուսումնական միջավայրը	ա/ Դպրոցի ուսումնական բազայի համալրում բ/ Ուսումնական միջավայրի բարեփոխում
Կրթության որակը՝ ըստ սովորողների ուսումնառության արդյունքների	Օլիմպիական խմբերի ձևավորում
Տեխնոլոգիաները և նորարարությունները	Համակարգչային ծրագրերով աշխատելու հմտություններին լավագույնս տիրապետող մանկավարժական համակազմի ձևավորում

5. Հաստատության գործունեության յուրաքանչյուր ոլորտի նպատակները և խնդիրները

Հաստատության գործունեության ոլորտ	Նպատակներ	Խնդիրներ
Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան	1. Շենքի երկարաժամկետ շահագործում 2. Դպրոցի շենքային պայմանների բարելավում 3. Նյութատեխնիկական բազայի հարստացում	1. - Դպրոցի հիմքի ամրացում, - ջրահեռացման համակարգի վերանորոգում. 2. - Հին մասնաշենքի 2-րդ և 3-րդ հարկերի հիմնանորոգում - Ֆիզկուլտուրայի բացօթյա սպորտհրապարակի կառուցում - Էներգախնայողական համակարգի ներդրում 3. Դպրոցական նոր գույքի ձեռքբերում
Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը	Հոգաբարձուների խորհրդի ստեղծում	Ֆինանսական միջոցների ներհոսքի ավելացման արդյունավետ գործողությունների իրականացում
Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր, դրանց վարումը	Դպրոցի գործունեության փաստաթղթային ողջ փաթեթի էլեկտրոնային ձևաչափի ստեղծում	Դպրոցի գործունեությունը կարգավորող էլեկտրոնային փաստաթղթերի վարում

Կառավարման և խորհրդակցական մարմինները	Կառավարման և խորհրդակցական մարմինների գործունեության բարելավում	ա/ Հոգաբարձուների խորհրդի ձևավորում։ բ/ Դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինների համագործակցության արդյունավետության բարձրացում
Աշակերտական համակազմը	Ժամանակի մարտահրավերներին դիմակայող ապագա քաղաքացու ձևավորում	Աշակերտական համակազմի արդի կրթական պահանջներին և արժեհամակարգին ինտեգրում
Մանկավարժական համակազմը	Կադրային քաղաքականության բարելավում	Առաջնորդվելով ուսուցչի թափուր տեղի մրցույթի կարգով՝ հավակնորդներին տալ լրացուցիչ հնարավորություն տեղում անցնել գործնական փորձաշրջան
Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ	Համայնքում գործող հիմնական դպրոցների շարքում լինել դպրոց-կենտրոն՝ ըստ դպրոցի ուժեղ ոլորտների	Համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ համագործակցության խորացում
Ուսումնական միջավայրը	Ուսումնական միջավայրի բարելավում	ա/ Դպրոցի ուսումնական բազայի համալրում

		բ/ Ուսումնական միջավայրի բարեփոխում
Կրթության որակը՝ ըստ սովորողների ուսումնառության արդյունքների	Կրթության որակի բարելավում	Օլիմպիական խմբերի ձևավորում
Տեխնոլոգիաները և նորարարությունները	Մանկավարժական հմուտ կադրերի ձևավորում	Համակարգչային ծրագրերով աշխատելու հմտություններին տիրապետող մանկավարժական համակազմի ձևավորում

6.Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները, կատարողները, ժամանակացույցը և հնարավոր ֆինանսական ծախսերը

Խնդիրներ	Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողություններ	Կատարողներ	Ժամանա-կացույց	Հնարավոր ֆինանսական ծախսեր
1. - Դպրոցի հիմքի ամրացում, - ջրահեռացման համակարգի վերանորոգում.	1.ա/Աշխատանքները նախատեսել առաջիկա ուստարվա նախահաշվով բ/ Նախահաշիվը հաստատելուց հետո	Տնօրեն Հաշվապահ Գնումների համակարգող Տնտեսվար	2022թ.	Դպրոցի բյուջե

	հայտարարել մրցույթ համապատասխան շինարարական աշխատանքների համար			
2. - Հին մասնաշենքի 2-րդ և 3-րդ հարկերի հիմնանորոգում - Ֆիզկուլտուրայի բացօթյա սպորտհրապարակի կառուցում - Էներգախնայողական համակարգի ներդրում	1.ա/Աշխատանքները նախատեսել առաջիկա ուստարվա նախահաշվով բ/ Նախահաշիվը հաստատելուց հետո հայտարարել մրցույթ համապատասխան շինարարական աշխատանքների համար	Տնօրեն Հաշվապահ Գնումների համակարգող Տնտեսվար	2023թ.	Դպրոցի բյուջե
3. Դպրոցական նոր գույքի ձեռքբերում	1.ա/Աշխատանքները նախատեսել առաջիկա ուստարվա նախահաշվով	Տնօրեն Հաշվապահ Գնումների համակարգող Տնտեսվար	2022թ. 2023թ. 2024թ.	Դպրոցի բյուջե

Ֆինանսական միջոցների ներհոսքի ավելացման արդյունավետ գործողությունների իրականացում	1.ա/Հոգաբարձուների խորհրդի ձևավորում բ/ Դպրոցի տարածքների վարձակալություն	Տնօրեն ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ	2022թ. 2021-2026թթ.	- Իրավա-կան ակտերի գրանց-ման ծախսեր
Դպրոցի գործունեությունը կարգավորող էլեկտրոնային փաստաթղթերի վարում	Վերապատրաստում և դասընթացներ	ԿՏԱԿ Օպերատոր Ինֆորմատիկայի ուսուցչուհի	2021-2026 թթ.	-
ա/ Հոգաբարձուների խորհրդի ձևավորում։ բ/ Դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինների համագործակցության արդյունավետության բարձրացում	Դպրոցի կանոնադրությամբ ամրագրված համապատասխան կետերի դրույթների ձևավորել Հոգաբարձուների խորհուրդ Կազմակերպել հանդիպումներ, կլոր սեղաններ, սեմինարներ, քննարկումներ	Տնօրեն ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ Տնօրեն ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ խորհրդակ ցական մարմինների	2022թ. 2021-2026 թթ.	- -

		անդամներ		
Աշակերտական համակազմի՝ արդի կրթական պահանջներին և արժեհամակարգին ինտեգրում	Համագործակցություն առաջատար այլ կրթկան կառույցների՝ հետ փորձի փոխանակաման, համատեղ ծրագրեր իրականացնելու նպատակով	Տնօրեն Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալներ	2022-2026 թթ.	-
Առաջնորդվելով ուսուցչի թափուր տեղի մրցույթի կարգով՝ հավակնորդներին տալ լրացուցիչ հնարավորություն տեղում անցնել գործնական փորձաշրջան	ա/ Անցկացնել ուսուցչի թափուր տեղի մրցույթ բ/ Հավակնորդներին տալ փորձաշրջան անցնելու հնարավորություն	Տնօրեն Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալներ	2022-2026 թթ.	-
Համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ համագործակցության խորացում	Կազմակերպել հանդիպումներ, սեմինարներ, քննարկումներ, միջոցառումներ	Տնօրեն ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ	2021-2026 թթ.	Դպրոցի բյուջե
ա/ Դպրոցի ուսումնական բազայի	ա/ԱԹՍ-ների լաբորատորիայի	Տնօրեն Տնտեսվար	2021-2026թթ.	Դպրոցի բյուջե

համալրում բ/ Ուսումնական միջավայրի բարեփոխում	բացում և բացօթյա սպորտհրապարակի կառուցում բ/Վերապատրաստումներ, դասընթացներ	Հաշվապահ Գնումների համակարգող Տնօրեն Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալներ		Պետական ֆինանսավորում և դպրոցի բյուջե
Օլիմպիական խմբերի ձևավորում	Համապատասխան որակյալ ներգրավմամբ խմբի ձևավորում	Տնօրեն Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալներ	2021-2026 թթ.	Պետական բյուջե
Համակարգչային ծրագրերով աշխատելու հմտություններին տիրապետող մանկավարժական համակազմի ձևավորում	Սեմինարների, վերապատրաստումների իրականացում	Տնօրեն Ինֆորմատիկայի ուսուցիչ	2021-2026 թթ.	Դպրոցի բյուջե

6.1 Յուրաքանչյուր խնդրի իրականացման գործողությունների, դրանց պատասխանատուների, ժամկետների, ակնկալվող արդյունքների սահմանումը

Յուրաքանչյուր խնդրի իրականացման գործողություններ	Պատասխանա-տուներ	Ժամկետ-ներ	Ակնկալվող արդյունքներ
1. - Դպրոցի հիմքի ամրացում, - ջրահեռացման համակարգի վերանորոգում.	Տնօրեն Հաշվապահ Գնումների համակարգող Տնտեսվար Շինարարական կազմակերպություն	2022թ.	1. Շենքի երկարաժամկետ շահագործում, անվատանգության կանոնների համապատասխան կառույց
2. - Հին մասնաշենքի 2-րդ և 3-րդ հարկերի հիմնանորոգում - Ֆիզկուլտուրայի բացօթյա սպորտհրապարակի կառուցում - Էներգախնայողական համակարգի ներդրում	Տնօրեն Հաշվապահ Գնումների համակարգող Տնտեսվար	2023թ.	2. Բարելավված դպրոցական պայմաններ
3. Դպրոցական նոր գույքի ձեռքբերում	Տնօրեն Հաշվապահ Գնումների համակարգող Տնտեսվար	2022-2025 թթ.	3.Նյութատեխնիկական բազայով հարուստ դպրոց

Ֆինանսական միջոցների ներհոսքի ավելացման արդյունավետ գործողությունների իրականացում	Տնօրեն ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ	2022թ.	Հոգաբարձուների խորհրդի ստեղծում
Դպրոցի գործունեությունը կարգավորող էլեկտրոնային փաստաթղթերի վարում	ԿՏԱԿ Օպերատոր Ինֆորմատիկայի ուսուցչուհի	2022-2026թթ.	Դպրոցի գործունեության փաստաթղթային ողջ փաթեթի պաշարների էլեկտրոնային շտեմարան
ա/ Հոգաբարձուների խորհրդի ձևավորում: բ/ Դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինների համագործակցության արդյունավետության բարձրացում	Տնօրեն ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ	2022թ.	Կառավարման և խորհրդակցական մարմինների բարելավված, զարգացած գործունեության համակարգում
Աշակերտական համակազմի արդի կրթական պահանջներին և արժեհամակարգին ինտեգրում	Տնօրեն Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալներ	2022-2026 թթ.	Ժամանակի մարտահրավերներին դիմակայող, կայուն արժեհամակարգով ապագա քաղաքացու ձևավորում
Առաջնորդվելով ուսուցչի թափուր տեղի	Տնօրեն Ուսումնական	2022-2026 թթ.	Բարելավված կադրային

մրցույթի կարգով՝ հավակնորդներին տալ լրացուցիչ հնարավորություն տեղում անցնել գործնական փորձաշրջան	աշխատանքների գծով տնօրենի տեղակալներ		քաղաքականության արդյունքում ստեղծված հզոր դպրոց
Համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ համագործակցության խորացում	Տնօրեն ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ	2021-2026 թթ.	Համայնքում գործող հիմնական դպրոցների շարքում լինել դպրոց-կենտրոն՝ ըստ դպրոցի ուժեղ ոլորտների
ա/ Դպրոցի ուսումնական բազայի համալրում բ/ Ուսումնական միջավայրի բարեփոխում	Տնօրեն Տնտեսվար Հաշվապահ Գնումների համակարգող Տնօրեն Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալներ	2021-2026 թթ.	Հարստացված ուսումնական բազա և բաեփոխված ուսումնական միջավայր
Օլիմպիական խմբերի ձևավորում	Տնօրեն Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի	2021-2026 թթ.	Կրթության որակի բարելավում

	տեղակալներ		
Համակարգչային ծրագրերով աշխատելու հմտություններին տիրապետող մանկավարժական համակազմի ձևավորում	Տնօրեն Ինֆորմատիկայի ուսուցիչ	2021-2026 թթ.	Համկարգչային ծրագրերին տիրապետող և դրանք ուսումնական գործընթացում ներդնող մանկավարժական հմուտ կադրեր

6.2 Զարգացման ծրագրի ֆինանսավորման մեխանիզմների սահմանումը

Դպրոցն այժմ ֆինանսավորվում է ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի N 1262-Ն որոշմամբ հաստատված ֆինանսավորման բանաձևով (չնայած այն հանգամանքի, որ վերոնշյալ կարգը ենթարկվել է փոփոխության և ուժի մեջ է մտել 2021 թ. հունվարից, այժմ էլ գործարկվում է Տավուշի մարզում)։

Նախահաշվով նախատեսել զարգացման ծրագրի ֆինանսական ծախսեր ենթադրող գործողությունների համապատասխան հոդվածներ և ներկայացնել Երևանի քաղաքապետարանի ֆինանսական վարչության համապատասխան բաժնի հաստատմանը։

7. Ծրագրի իրականացման ռիսկերը և դրանց ազդեցությանն ուղղված գործողությունները

Հաստատության գործունեության ոլորտ	Ծրագրի իրականացման ռիսկերը	Դրանց ազդեցությանն ուղղված գործողությունները

Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան	Ֆորսմաժորային իրավիճակներ (պատերազմ, համավարակ, բնական աղետներ)։ 2. Անհրաժեշտ թույտվությունների երկարաձգում։	1. ԱԻՆ-ի և դպրոցի համագործակցության ամրապնդում 2. Հետևողական աշխատանք
Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը	Դպրոցի ֆինանսավորման բանաձևի փոփոխությամբ պայմանավորված դրամական հոսքերի նվազում։	Լիազոր մարմնին և համապատասխան գերատեսչություններին առաջարկների տրամադրում
Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր, դրանց վարումը	Էլեկտրոնային փաստաթղթերի ծրագրային անվտանգության ապահովման խնդիրը և հաքերային հարձակումներից պաշտպանվելու հուսալիության ցածր մակարդակը։	Հակավիրուսային ծրագրերով համակարգիչների անխափան աշխատանքի ապահովում
Կառավարման և խորհրդակցական մարմինները	Քննարկվող հարցերը միասնական օրակարգում ներկայացնելու հնարավորությունը և կազմակերպչական հարցերի կարգավորումը	Կառավարման և խորհրդակցական մարմինների՝ իրենց աշխատանքային պլանների կազմման համաձայնեցում

Աշակերտական համակազմը	Ինքնուրույն գործելու պասիվություն	Արդի կրթական համակարգի պահանջներով պայմանավորված «Գիտելիք», «Հմտություն», «Վերաբերմունք» և «Արժեք» բաղադրիչների ներդրում
Մանկավարժական համակազմը	Լավագույն ուսուցիչների արտահոսք այլ աշխատանքային գործունեություն ծավալելու նպատակով	Լավագույն ուսուցիչներին դրամական խրախուսում, երիտասարդ կադրերին մոտիվացնել դեպի դպրոց
Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ	Շահագրգիռ կողմերի ակտիվության, նախաձեռնողականության պասիվությունը:	Դպրոցի գործունեության առավել թափանցիկ ներկայացում տարբեր հարթակներում
Ուսումնական միջավայրը	Միայն ավանդական ուսումնական միջավայր ապահովելով՝ դպրոցը հետ կմնա կրթական ոլորտի այն փոփոխություններից, որոնք որդեգրված են ԿԳՄՍ նախարարության	ԿԳՄՍՆ-ի կողմից հաստատված Հանրակրթական պետական չափորոշչի պահանջների իրականացում

	բարեփոխումների ծրագրում:	
Կրթության որակը՝ ըստ սովորողների ուսումնառության արդյունքների	Աշակերտների թվի ցածր մասնակցությունը առարկայական օլիմպիադաներին	Օժտված երեխաների հետ հետևողական և նպատակային աշխատանք
Տեխնոլոգիաները և նորարարությունները	Ինտերնետ կապի դանդաղագործություն, մասնագետների ճկունությունը ոլորտի փոփոխություններին արձագանքելիս	Գերարագ ինտերնետի ապահովում պետական կամ դպրոցի միջոցներով

7. 1 Զարգացման ծրագրի իրականացման ռիսկերի ազդեցության նվազմանն ուղղված գործողությունների սահմանումը

Վերոնշյալ (բաժին 7) աղյուսակում ըստ ոլորտների մանրամասն ներկայացված են զարգացման ծրագրի իրականացման բոլոր ռիսկերն ու դրանց ազդեցության նավազեցմանն ուղղված գործողությունները: Այդ գործողություններն ընգրկում են լիազոր մարմնի, համայնքի, դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինների ջանքերը, ինչպես նաև դպրոցի բոլոր ռեսուրսներն ու հնարավորությունները :

8. Ծրագրի գնահատման չափանիշները, վերահսկողությունը

Զարգացման ծրագրի գնահատումը ծրագրի գործողություններով պլանավորված և իրականացված արդյունքների համեմատման գործընթաց է: Գնահատման գործիքները յուրաքանչյուր գործողության առանձնահատկություններից բխող ցուցանիշներ են, որոնց միջոցով չափվում է ակնկալվող արդյունքը: Արդյունքների գնահատումը պետք է իրականացնել պարզ և բարդ ցուցանիշների համեմատական ներկայացման, ինչպես նաև համապատասխան հաշվետվությունների միջոցով: Դրանք պետք է հասանելի

լինեն պետական լիազոր մարմիններին, դպրոցի աշխատակազմին, սովորողների ծնողներին, սովորողներին, համայնքին և այլն: Ծրագրում ընթացիկ աշխատանքների և արձանագրված արդյունքների վերաբերյալ անհրաժեշտ է պարբերաբար հրապարակել մատչելի տեղեկատվություն դպրոցի հայտարարությունների համար սահմանված տեղում, հաստատության կայքում և իրազեկել ծնողներին՝ ժողովների և դպրոցական միջոցառումների ժամանակ:

Զարգացման ծրագրի իրականացման գործընթացի վերահսկողությունը պետք է իրականացնել ծրագրում նախապես մշակված միջոցառումների միջոցով: Ծրագրի իրականացման վերահսկողության միջոցը 5-ամյա ծրագրի հիման վրա կազմված հաստատության գործունեության տարեկան աշխատանքային պլանների կատարողականներն են:

Ծրագրի վերահսկողությունը իրականացնում է այն հավանության արժանացրած կառավարման խորհուրդը:

8. 1 Զարգացման ծրագրի մշտադիտարկման, վերահսկողության մեխանիզմների, ծրագրի իրականացման արդյունավետության գնահատման ցուցանիշների ձևակերպումը

Զարգացման ծրագրի մշտադիտարկում	Վերահսկողության մեխանիզմներ	Ծրագրի իրականացման արդյունավետության գնահատման ցուցանիշներ
2021-2022 I- կիսամյակ	Տնօրենի հաշվետվություն	Տնօրենի հաշվետվության կատարողական
II- կիսամյակ	Ներքին գնահատում	Ներքին գնահատման ցուցանիշ
2022-2023 I- կիսամյակ	Տնօրենի հաշվետվություն	Տնօրենի հաշվետվության կատարողական
II- կիսամյակ	Ներքին գնահատում	Ներքին գնահատման ցուցանիշ
2023-2024 I- կիսամյակ	Տնօրենի հաշվետվություն	Տնօրենի հաշվետվության կատարողական
II- կիսամյակ	Ներքին գնահատում	Ներքին գնահատման ցուցանիշ

2024-2025 I- կիսամյակ	Տնօրենի հաշվետվություն	Տնօրենի հաշվետվության կատարողական
II- կիսամյակ	Ներքին գնահատում	Ներքին գնահատման ցուցանիշ
2025-2026 I- կիսամյակ	Տնօրենի հաշվետվություն	Տնօրենի հաշվետվության կատարողական
II- կիսամյակ	Ներքին գնահատում	Ներքին գնահատման ցուցանիշ

8. 2 Հաստատության մասին համառոտ տեղեկանք

Համայնքում գործող հիմնական դպրոցների շարքում Լ. Ազգալդյանի անվան հ. 200 հիմնական դպրոցը իր շենքային պայմաններով, աշակերտական համակազմով, մանկավարժական ներուժով, ծնողական համայնքի, կառավարման և խորհրդակցական մարմինների, Հոգաբարձուների խորհրդի կատարած աշխատանքով, կրթական նոր ժամանակների պահանջներին համընթաց զարգացող կրթօջախ է: Դպրոցում տիրում է կառուցողական, ստեղծարար, հավասարը հավասարին և համագործակցային միջավայր՝

համախմբված մեկ գաղափարի շուրջ. «**Բոլոր երեխաներն իրավունք ունեն կրթություն ստանալու, և դպրոցն է նրանց հենման կետը»:**